

SEDA HAMBARCUMYAN INTERNET BANKING

Key words: *Internet banking, banking services, information technology, information security.*

Internet banking is a common name for remote banking technologies through which access to personal accounts and various transactions is realized at any time from any computer that has access to the Internet. Internet banking appeared to provide banking services remotely, via the Internet. Below, preliminary conditions, advantages and disadvantages of Internet banking development will be presented.

ԱՆՈՒՇ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*Մակրոտնտեսական քաղաքականություն և
կանխարեսում, բակալավրիատ, 3-րդ կուրս*

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏՔԸ ԵՎ ԴՐԱ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

Հիմնաբառեր. *պետական պարտք, արտաքին պետական պարտք, հարկաբյուջեպային սահմանափակումներ, պետական պարտքի սպասարկում, պետական պարտքի կառավարում*

Հոդվածում քննարկվել են պետական պարտքի էությունը, ներգրավման նպատակները և աճի շարժընթացը ՀՀ-ում: Վերլուծվել է ՀՆԱ/պետական պարտք հարաբերակցությունը, որը դրսևորում է անընդհատ աճի միտում վերջին տարիներին մոտենալով վրանգավոր սահմանագծի:

Ներկայացվել են պետական պարտքի՝ ՀՀ տնտեսության վրա ունեցած հնարավոր դրական և ակնառու բացասական հետևանքները՝ ընդգծելով մրահոգիչ սահմանագծից այն հեռացնելու կենսական անհրաժեշտությունը:

Տնտեսագիտական գրականությունում պետական պարտքի բազմաթիվ սահմանումներ կան, որոնցից ամենաընդհանրականը այն դիտարկում է որպես տարբեր տարիների պետբյուջեների պակասուրդների/ավելցուկների հանրագումար:¹ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետական պարտքը Հայաստանի Հանրապետության անունից (բացառությամբ՝ ռեզիդենտների հանդեպ Կենտրոնական բանկի առկա պարտքային պարտավորությունների) և ՀՀ ԿԲ անունից ստանձնված և որոշակի պահի դրությամբ առկա պարտքային պարտավորությունների հանրագումարն է²:

Ներկայումս պարտքի ներգրավումը լայն տարածում ունի աշխարհում, և հազվադեպ է հարց ծագում, թե ի վերջո ինչ նպատակով է այն ներգրավվում: Աշխարհում գրեթե երկիր չկա, որ ապրում է առանց պարտքի, և պարտքերի ներգրավումը աստիճանաբար մեծ ծավալներ է ընդգրկում:

¹ Տե՛ս Հ.Բ. Ղուլչյան, Գ.Ա.Ավագյան, Մակրոտնտեսական կարգավորում, հեղինակային հրատ., Երևան, 2008 թ., էջ 244:

² Տե՛ս «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, գլուխ 1, հոդված 2:


Ընդ որում, առավել խնդրահարույց է ոչ թե պետական պարտքի ներգրավումը, այլ դրա օգտագործման արդյունավետությունը: Եթե ներգրավման նպատակները ձևակերպված չեն, ապա պարտքի կառավարման արդյունավետության մասին անիմաստ է խոսել, քանի որ անհայտ են մնում այն սկզբունքները, որոնք հիմք ընդունելով կարող ենք դատել կառավարման արդյունավետ կամ ոչ արդյունավետ լինելու մասին:

Հարցի կարևորության հստակ ըմբռնումը գրեթե բոլոր երկրների կառավարություններին մղել է՝ օրենսդրորեն սահմանելու պետական պարտքի ներգրավման կարևորագույն նպատակները: Դասակարգման հիմքում, կախված հետազոտության նպատակներից, կարող են դրվել ամենատարբեր չափանիշներ:

Այսպես, «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում, որպես պետական պարտքի ներգրավման նպատակներ, սահմանվում են՝

1. պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը և ընթացիկ իրացվելիության ապահովումը,
2. վճարային հաշվեկշռին աջակցությունը և պահուստների համալրումը,
3. ներքին պարտքի շուկայի պահպանումն ու զարգացումը:¹

Սեփական միջոցների սակավությունը ստիպել է ՀՀ-ին՝ պետական պարտք ներգրավել անկախության առաջին տարիներից: Պետական պարտքի ծավալները կտրուկ աճել են. 2009 թ.-՝ համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի բացասական հետևանքները մեղմացնելու նպատակով, բնակչության խոցելի խմբերին պաշտպանելու, ինչպես նաև՝ տնտեսական ակտիվությունը ողջամիտ մակարդակում պահպանելու անհրաժեշտությամբ պայմանավորված: Արդյունքում պետական պարտքը, նախորդ տարվա համեմատությամբ, գրեթե կրկնակի աճել է: Ընդ որում, հետագա բոլոր տարիներին, բացառությամբ 2014-ի, աճի միտումը շարունակվել է (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. Պետական պարտքի շարժընթացը ըստ տարիների²

2017 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմել է 3279.60 մլրդ դրամ կամ 6774.6 մլն դոլար, որը աճել է 14%-ով: Ընդ որում, Կառավարության արտաքին պարտքի մեծ մասը՝ 84.1%-ը, բաժին է ընկնում

¹ Տե՛ս «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, գլուխ 2, հոդված 8:

² Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն,

http://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/:

միջազգային կազմակերպություններին: Ամենախոշոր վարկատուներն են Զարգացման միջազգային ընկերակցությունը (36.3%), Վերակառուցման և զարգացման միջազգային բանկը (16.8%) և Ասիական զարգացման բանկը (13.7%): Օտարերկրյա պետություններին բաժին է ընկնում Կառավարության արտաքին պարտքի 15.1%-ը, այդ թվում՝ Ճապոնիային՝ 8.8%-ը, Գերմանիային՝ 3.4%-ը:¹

Ըստ ՀՀ ֆինանսների նախարարության ամսական ամփոփ տեղեկագրի² ՀՀ պետական պարտքը 2018 թ. փետրվարի 28-ի դրությամբ կազմել է 3295 մլրդ դրամ կամ 6851 մլն դոլար, որից 3002 մլրդ դրամը կամ 6242 մլն դոլարը կազմում է Կառավարության պարտքը, իսկ 293 մլրդ դրամը կամ 609 մլն դոլարը՝ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը: Ինչպես նկատում ենք, 2017 թ. համեմատ, կրկին ունենք պետական պարտքի աճ:

Այժմ փորձենք պարզել, թե արդյոք պետական պարտքի մեծ ծավալներով ներգրավումը արդարացված է և դրական է ազդում իրական ՀՆԱ ծավալների վրա, և ինչպիսի՞ն է դրանց հարաբերակցությունը: Անշուշտ, տնտեսական աճը զուտ պետական պարտքի աճով բացատրելը ճիշտ չէ: Ըստ էության, պետությունը մեծ պարտքի է դիմում հիմնականում տնտեսության անկման կանխարգելման նպատակով կամ էլ հենց անկման փուլում պետական ծախսերի մեծացմամբ փորձելով խթանել ամբողջական պահանջարկը և ինչ-որ չափով փոխհատուցել բնակչության տնօրինվող եկամտի նվազումը, ուստի դրական կորելյացիա պետական պարտքի և ՀՆԱ-ի մեծությունների աճի միջև չի ենթադրվում: Այս տեսանկյունից դժվար է և նույնիսկ՝ անհնար, պետական պարտքի ազդեցության չափը տնտեսական աճի վրա ճիշտ գնահատելը: Նպատակահարմար է քննարկել ՀՀ պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը, որը 2002-2008 թթ. շարունակական նվազման միտում է ցուցաբերել. եթե 2002 թ. պետական պարտքը կազմում էր ՀՆԱ 47%-ը, ապա 2008-ին՝ ընդամենը 16.4%-ը (տե՛ս գծապատկեր 2): Դա պայմանավորված էր պետական պարտքի հարաբերական կայունության պայմաններում ՀՆԱ բարձր տեմպերի ապահովմամբ: Իրավիճակը կտրուկ փոխվեց 2009 թ., երբ ՀՆԱ անկման հետևանքները մեղմելու նպատակով մեծ ծավալով պետական պարտք ներգրավվեց, որը կազմեց ՀՆԱ 40.6%-ը: Հետագա՝ 2010-2013 թթ. պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը մեծ փոփոխություն չի կրել՝ տատանվելով 41%-ի շուրջ:³ 2010 թ. իրական հատվածը վերականգնման հուսադրող նշաններ դրսևորեց, սակայն մինչև տարեվերջ իրական ՀՆԱ աճի ցուցանիշը չնչին էր՝ 2.1%՝ 20 տարվա միջին ցուցանիշին համահունչ: Հետագա բոլոր տարիներին գրանցվել են տնտեսական աճի դրական տեմպեր (միջինը՝ 4%), որը սակայն ուղեկցվել է պետական պարտքի աճով (միջինը՝ 9.3%): Ի վերջո, 2015 թ. պետական պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը հասավ վտանգավոր 60%-ի սահմանագծին, իսկ ըստ «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքի՝ եթե պետական պարտքի մեծությունը գերազանցում է համախառն ներքին արդյունքի 40%-ը, ապա հաջորդ տարվա պետական բյուջեի դեֆիցիտը չպետք է գերազանցի ՀՀ համախառն ներքին արդյունքի

¹ Աղբյուրը՝ «Ֆակտոր» տեղեկատվական կենտրոնի տվյալներ:


² Տե՛ս www.minfin.am, Հաշվետվություններ և վիճակագրություն, ամսական ամփոփ տեղեկագիր:

³ Տե՛ս www.minfin.am, տարեկան հաշվետվություններ:

վերջին երեք տարիների ծավալների միջին ցուցանիշի 3%-ը¹: Չնայած օրենքի համաձայն պարտքը չպետք է գերազանցի ՀՀ նախորդ տարվա ՀՆԱ 60%-ը, բայցև հստակ չէ, թե ինչ պետք է անել, եթե դա տեղի ունենա, քանի որ Կառավարության պարտքը կարող է գերազանցել սահմանված ցուցանիշը ոչ միայն նոր գործարքների կնքման, այլ նաև ազգային արժույթի արժեզրկման կամ ՀՆԱ կտրուկ նվազման հետևանքով: Սա դրդեց ՀՀ ԱԺ-ին՝ 2015 թ. հունիսի 23-ին փոփոխություններ կատարել «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենքում՝ պետական պարտքի մեծության սահմանափակումները տարածելով միայն Կառավարության պարտքի վրա (առանց ԿԲ պարտքի), լրացուցիչ միջոցներ ներգրավելու հնարավորություն տալով Կառավարությանը: Որպես հետևանք՝ 2016 թ.-ին Կառավարության պարտք/ՀՆԱ հարաբերակցությունը (առանց ԿԲ պարտքի) մոտեցավ 60%-ի եզրագծին (տե՛ս գծապատկեր 2):

2017 թ. ավարտին ՀՆԱ իրական աճը կազմել է 7,5%, իսկ պետական պարտքինը՝ 14%²: Հաշվի առնելով, որ համաշխարհային տնտեսությունը, մասնավորապես՝ Հայաստանի հիմնական տնտեսական գործընկերներ ԵՄ-ն և Ռուսաստանը շարժվում են ավելի ցածր աճի ուղիով, ամենայն հավանականությամբ, երկիրը առաջիկայում կգործի նման համատեքստում:

Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2017 թ. համախառն ներքին արդյունքը բացարձակ արժեքով կազմել է 5580,1 մլրդ դրամ, 2016 թ.՝ 5079,8 մլրդ դրամ, իսկ 2015 թ.՝ 5043.6 մլրդ դրամ: ՀՀ բյուջեի դեֆիցիտը 2018-ի համար նախատեսված է 156.8 մլրդ դրամ: Դյուրին է հաշվարկել, որ 2015-2017 թթ. ՀՆԱ միջին ցուցանիշը կազմում է 5234,5, և եթե ՀՀ բյուջեի դեֆիցիտը կազմի 156,8 մլրդ դրամ, ապա այն կլինի նախորդ երեք տարիների ՀՆԱ միջին ցուցանիշի 2,99%-ը: Ճիշտ է, սա դեռևս գտնվում է նորմայի սահմաններում, սակայն ունի շատ մտահոգիչ բնույթ, և կա ռիսկ, որ փոքր-ինչ շեղումը կարող է բերել պետական պարտքի մասին ՀՀ օրենքի վերոնշյալ կետի խախտման:



Գծապատկեր 2. ՀՀ պետական պարտքի և պետական պարտք/ՀՆԱ ցուցանիշների շարժընթացը³

¹ Տե՛ս «Պետական պարտքի մասին» ՀՀ օրենք, գլուխ 1, հոդված 5, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին օրենք», 21-րդ հոդված:


² Տե՛ս Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թ. հունվար-դեկտեմբերին, ՀՀ ԱՎԾ:

³ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն, http://www.minfin.am/hy/page/petakan_partqi_veraberyal_ampop_tvyalner/:

Փաստորեն, օրենսդրական այս վերջին փոփոխությունը Կառավարությանը ավելի շատ վարկային միջոցներ ներգրավելու հնարավորություն է տալիս: Սակայն պետք է հիշել, որ այսօր ներգրավված միջոցները վաղը դառնում են ծախս և նվազեցնում են ընթացիկ ֆինանսական միջոցները, այդ թվում՝ զարգացման ծրագրերի ֆինանսավորման նպատակով օգտագործելու հնարավորությունները: Ուստի, նման իրավիճակից խուսափելու համար պետական պարտքի աճը պետք է զուգորդվի պետական ներդրումների աճով:

Տնտեսության այս իրադրությունը, պետական պարտքի հետևանքները և դրանք հաղթահարելու եղանակները հասկանալու համար ներկայացնենք պետական պարտքի մարման ժամանակացույցը: Այսպես, ըստ 2017-2019 թթ. պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրի՝ 2015 թ. տարեվերջի դրությամբ ձևավորված Կառավարության ներքին պարտքի մարումները սփռված են մինչև 2032 թ., իսկ արտաքին պարտքինը՝ մինչև 2050 թ. (տե՛ս գծապատկեր 3):

2018-ին պետական պարտքի սպասարկման գծով նախատեսվում է ուղղել 326 մլն դոլար, որից 186 մլն դոլարը՝ ներքին պարտքի գծով (պետական դրամային պարտատոմսեր), 120 մլն դոլարը՝ արտաքին պարտքի գծով: 2020 թվականը, ինչպես տեսնում ենք գծապատկեր 3-ում, պետական պարտքի սպասարկման առումով առանձնանում է ընդհանուր շարժընթացից: Այդ տարի Հայաստանը պետք է պետական պարտքի մարմանն ուղղի մոտ 800 մլն դոլար: Սա պայմանավորված է եվրոպարտատոմսերի ժամկետի ավարտով: Հայաստանը պետք է հետ գնի դեռևս 2013 թ. թողարկված 7 տարի մարման ժամկետով պարտատոմսերը՝ 500 մլն դոլար ծավալով (սյուների կարմիր հատվածը): Սա էլ հենց առիթ է տալիս վստահորեն պնդելու, որ ՀՀ տնտեսության համար կենսական է վարկերի օգտագործման առավել արդյունավետ եղանակներին անցումը, քանզի ՀՀ Կառավարությունը սխալվելու հնարավորություն այլևս չունի:



Գծապատկեր 3. Կառավարության պարտքի մարման ժամանակացույցն առ 30.09.2017, մլն ԱՄՆ դոլար¹

¹ Աղբյուրը՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

Ասել, որ պարտքի ներգրավումը գնալով էլ ավելի մեծ ծավալներ է ընդգրկում ամբողջ աշխարհում, կնշանակի ոչինչ չասել, քանզի այն կարևորությունն ու անհրաժեշտությունը, որն ունի երկրների տնտեսական զարգացման մեջ, պարզապես անհերքելի է: Պետական պարտքի դերը դժվար է թերագնահատել նաև ՀՀ տնտեսության զարգացման գործում: Վերջին տարիներին պետական պարտքի ծավալները ինտենսիվ աճ են գրանցում հասնելով մտահոգիչ սահմանների: Այսուհանդերձ, ՀՀ պետական պարտքը գնահատվում է կառավարելի: ՀՀ Կառավարության հրապարակած տվյալների համաձայն՝ լողացող տոկոսադրույքով ներգրավված վարկերի կշռի կրճատման շնորհիվ մեղմվել է տոկոսադրույքի ռիսկը, որը լողացող տոկոսադրույքների մեկ տոկոսային կետի փոփոխության դեպքում առաջիկա երեք տարիների համար Կառավարության արտաքին պետական պարտքի տոկոսային ծախսերի գծով կանխատեսում է տարեկան միջինում վեց միլիոն դոլարից ավելի փոփոխություն՝ նախկինում ամրագրված շուրջ 10 միլիոն դոլարի փոխարեն:

Եվ քանի որ Հայաստանին տրամադրվող վարկերի մեծ մասը փափուկ վարկեր են՝ ցածր տոկոսադրույքներով և սպասարկման երկարատև ժամկետներով, ուստի դրանց արդյունավետ օգտագործման պարագայում հնարավոր է հրաշալի արդյունքների հասնել: Այսպիսով, կարևորագույն խնդիրը ստացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործումն է: Սա կրեթի որոշակի տնտեսական աշխուժացման՝ հնարավոր դարձնելով պետական պարտքի բեռի թեթևացումը:

АНУШ АРУТЮНЯН

ГОСУДАРСТВЕННЫЙ ДОЛГ РА И ЕГО ЭКОНОМИЧЕСКИЕ ПОСЛЕДСТВИЯ

Ключевые слова: *государственный долг, внешний государственный долг, фискальные ограничения, обслуживание государственного долга, управление государственным долгом.*

В статье обсуждаются суть, цели привлечения и динамика роста государственного долга РА. Проанализировано отношение ВВП к государственному долгу, которое в последние годы демонстрирует тенденцию устойчивого роста.

Представлены потенциальные положительные и очевидные негативные последствия государственного долга для экономики Армении, подчеркнув насущную необходимость его устранения с опасной границы.

ANUSH HARUTUNYAN

RA PUBLIC DEBT AND ITS ECONOMIC CONSEQUENCES

Key words: *public debt, external public debt, fiscal restriction, public debt service, public debt management.*

The article discusses the essence of public debt, goals of engagement and dynamics of growth. In the article was also analyzed the ratio of GDP to state debt. The latter demonstrates a steady increase in the trend in recent years.

The potential positive and obvious negative effects of the state debt on the Armenian economy have been presented, underlining the vital need to remove it from the troubled border.